**Արձանագրություն N 2-2**
**ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-26/8 ծածկագրով ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի Շամուտ բնակավայրում Ստեփան Սարգսյանի անվան ըմբշամարտի մարզադահլիճի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

11.05.2026թ.
ք.Երևան ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Աղայանց

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Քոչարյան
Հ. Գինովյան
Տ. Կոմիտասյան
Ա. Մարգարյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հակոբյան

**1. Գնման ընթացակարգի մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների մասին**

---

(Մ. Աղայանց)

1.1 Գնման ընթացակարգի մասնակիցների հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ

**«ՆՈՄ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ**

1. Մասնագետներից Հասմիկ Աբրահամյանի, Դավիթ Դավթյանի և Արտեմ Հակոբյանի CV-ները ներկայացված չեն հրավերով պահանջվող ձևաչափի համաձայն,
2. Առկա չեն մասնագետներից Արտեմ Հակոբյանի, Աշոտ Պետրոսյանի, Գայանե Ավետիսյանի, Դավիթ Դավթյանի, Հասմիկ Աբրահամյանի, Վահան Սարգսյանի գրավոր համաձայնությունները նշված ծառայությունները մատուցելու վերաբերյալ
3. Մասնագետներից Արմեն Գրիգորյանի, Գայանե Ավետիսյանի, Արտեմ Հակոբյանի, Հասմիկ Աբրահամյանի, Վահան Սարգսյանի փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

**«Նորաշեն» ՆՏ ԱԿ**

1. Ներկայացված էսքիզային նախագիծը մասնակցի կողմից ներկայացվել է նաև ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-25/5 ծածկագրով ՀՀ Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքում Մալխաս և Ռոման Ամոյանների անվան նոր մարզադպրոցի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայության գնման գործընթացների շրջանակներում: Հրավերի 1-ին մասի 2-րդ կետի 2.2.1 ենթակետի «էսքիզային նախագիծ» բաժնով նշված է, որ «Առաջարկվող էսքիզային նախագիծը պետք է լինի նոր՝ այն չպետք է հրապարակված լինի որևէ թղթային կամ էլեկտրոնային տարբերակով և առաջարկվող

նախագծով չպետք է կառուցված լինի որևէ շինություն», ուստի ներկայացված էսքիզը դիտարկման ենթակա չէ:

1.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել «ՆՈՄ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ին և «Նորաշեն» ՆՏ ԱԿ-ին, մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 12.05.2026թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում շտկումներ ներկայացվելու դեպքում, հայտերը կգնահատվեն բավարար, հակառակ դեպքում կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկումներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-26/8 ծածկագրով հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի tender5@minurban.am էլ. փոստին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4 դեմ-0:*

## 2. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

---

(Մ. Աղայանց)

2.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել արձանագրված անհամապատասխանությունները մասնակիցների կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 13.05.2026թ. ժամը 11:00-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ________________________ Մ.Աղայանց

Անդամ՝ ________________________ Ա. Քոչարյան

________________________ Հ. Գինովյան

________________________ Տ. Կոմիտասյան

________________________ Ա. Մարգարյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝ ________________________ Գ. Հակոբյան